

## Այս համարում

### Հայերեն բաժին

- 1- Մամուլը եւ Պատգամավորական Ժողովը.....1
- 2- Լուրեր – Իրանահայ.....2
- 3- Լուրեր – Իրան.....4
- 4- Լուրեր – Հայաստան.....5
- 5- Լուրեր – Միջազգային.....5
- 6- Հասարակական
  - Հին ցավեր նոր մտտեցումներ...6*
  - Ստացված գրություն...6*
  - Թեմական Խորհրդի երկամյա զեկույցը ՊԺ-ում...7*
- 7- Մշակութային
  - Հրաշյա Աճառյանը Պարսկաստանում(2)...8*
  - Հայ հին գրականություն...9*
- 8- Չանագանք.....10

### Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր - Իրանահայ համայնք.....1
- 2- Լուրեր - Իրան, Հայաստան.....2

#### Շապիկի առաջին էջում՝

Րաֆֆի Մարգամշակութային համալիրի Ֆուտբոլի կանաչապատված դաշտի բացումը

#### Շապիկի վերջին էջում՝

Րաֆֆի Մարգամշակութային համալիրի Ֆուտբոլի դաշտը

Համար 134, Հուլիս, 2007թ.

No. 134, July 2007

ماهنامه لویس - شماره ۱۳۴ تیر ماه ۱۳۸۶

## Մամուլը եւ Պատգամավորական Ժողովը

Սա քննարկվելիք բազմաթիվ թեմաներից մեկն է, որ գոյություն ունի մեր համայնքային կյանքում: 12-րդ ՊԺ-ի առաջին նիստերի ընթացքում առաջարկվեց այս հարցը օրակարգ դարձնել և որոշում տալ, որ իրանահայ մամուլը ներկայանա այդ դեմքաց նիստերին, սակայն մինչ այժմ մնացել է անորոշ և օրակարգ չդառնալով որևէ կողմնորոշում չկա այս կապակցությամբ: «Լույս» ամսագիրը մտադիր է նման հարցերի քննարկումը կատարել մամուլի միջոցով և արտացոլել տարբեր կարծիքներ և օգնել ՊԺ-ին, որպեսզի այս կապակցությամբ կողմնորոշվի լավագույն ձևով: Ստորև ձեզ ենք ներկայացնում մի քանի պատգամավորների կարծիքը այն հարցի շուրջ, թե Ի՞նչու իրանահայ մամուլը չի մասնակցում Պատգամավորական Ժողովի նիստերին:

1- Տիկ. Թալին Կարապետյան.- Իմ կարծիքով հատուկ պատճառ չունի, հնուց այդպես է եղել և հիմա էլ շարունակվում է: Երևի կան հարցեր, որ չպիտի արծարծվի և ՊԺ-ի դիվանը հարմար նկատելով հնարավոր է ընդհանուր հանդիպում դնի և որոշ տեղեկություններ փոխանցի:

2- Պրն. Հարություն Եղնազարյան.- Երևի թե ընդունված բան չի, բայց եթե որոշում դառնա, իմ կարծիքով խնդիր չի լինի:

3- Պրն. Ալբերտ Քոչարյան.- Պատգամավորական ժողովները դռնփակ են և ՊԺ-ի դիվանը երբ հարմար նկատի որոշ մամուլի ներկայացուցիչներին կը հրավիրի, կամ որևէ մամուլ ցանկության դեպքում կարող է դիմել և մասնակցել նիստերին, բայց ամենայն դեպս պատահել է, որ «Ալիք» օրաթերթից մասնակցել են:


4- Պրն. Էդիկ Ղահրամանյան.- ՊԺ-ի դիվանից հարցրեք, նրանք կասեն, ես չգիտեմ:

5- Պրն. Հրանդ Քեչիզզադե.- Ընդհանրապես, եթե կարևոր հարց լինի, որ պետք է տեղեկացվի՝ «Ալիք» օրաթերթից հրավիրում են:

6- Պրն. Գառնիկ Սարգսյան.- Մասնակցում են, բայց որոշ ժամանակ բացակայում են:

7- Տեր. Մեսրոպ Քահանա.- «Ալիք» օրաթերթից մասնակցում են, բայց մյուս մամուլները երևի թե քաղաքական հարցերի բերումով չեն մասնակցում:

Հուսի՛նե Սաֆարյան



# Լուրեր

## Իրանահայ Համայնք

### Շուտով արտագաղթի մասին սեմինար Թեհրանում

2007 թվականի Մայիսի 16-ի Պատգամավորական ժողովում խոսվեց արտագաղթի երևույթի վերաբերյալ և կարծիքներ արտահայտվեցին արտագաղթի տարբեր կողմերի մասին: Սրբազան Հայրը հանդես գալով, նշեց, որ նախատեսում է շուտով Թեհրանում անց կացնել արտագաղթի կապակցությամբ սեմինար, որին կմասնակցեն իրանահայ մտավորականները, պատգամավորներն ու բոլոր հետաքրքրվող ազգայինները:

Սեմինարի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, տարբեր առիթներով այդ հարցը բարձրացվել էր, սակայն արտահայտվելով այն միտքը, որ արտագաղթը մեզանից անկախ մի երևույթ է և մենք հատուկ մի գործ չենք կարող անել, հետաձգվել կամ չէր կազմակերպվել: Հույսով ենք համայնքի բոլոր մտավորականներն ու մտահոգված մարդիկ մասնակից կլինեն սույն սեմինարին և դրա արդյունքներն կարտացոլվեն իրանահայ մամուլի էջերում:

### Թեհրանում Անթիասի Ազգային Ժողովի ներկայացուցիչ Ղևոնդ Հարմիկ Դավթյանի ելույթը Պատգամավորական ժողովում

2007 թվականի Մայիս ամսվա 6-օրյա պատգամավորական ժողովի նիստերից մի քանիսին ներկա էր նաև Անթիասի Կաթողիկոսության ազգային ժողովի ներկայացուցիչ Ղևոնդ Հարմիկ Դավթյանը: Նա մի քանի անգամ կարճ ելույթներ ունեցավ, որտեղ համառոտակիորեն նրա մտքերը կարելի է ամփոփել հետևյալ կերպով. «Այս օրերի պատգամավորական ժողովի նիստերում ես նկատում եմ հետաքրքրություն, շահախնդրություն և մանրակրկիտ ուսումնասիրություն պատգամավորների կողմից համայնքային տարբեր հարցերի շուրջ և դա ինձ ոգևորում է: Խնդիրների արժարժեքները ձևը և լուծում տալը և դիվանի կողմից և պատգամավորների կողմից հաջող է եղել: Մենք ունենք որոշ պակասություններ, որով քիչ ենք զբաղվել և դա քաղաքականության ճշտումն է: Օրինակ բուժարանի և ծերանոցի համար պետք է հիմնավորումներ ու քաղաքականություն լինի: Արտագաղթի երևույթի մասին արտահայտվելիս բացակայում էր ուսումնասիրությունները, շարժառիթներն և այլը:

Թեմական խորհրդի, հաշվեքննիչ մարմնի և Կրոնական խորհրդի գեկույցներն ինձնքով և գեղեցիկ էին պատրաստված և դա գովելի է, բայց իմ խոսքը մեր սիստեմի մասին է, մենք մեր համայնքը վարում ենք հնուց եկած մեթոդներով ու ավանդներով: Ներկա պայմանները ստիպում են վերանայենք այս սիստեմը: Այսքան ժամանակ, որ դնում ենք այս գործերի համար իր բավարար արդյունքը չի տալիս և դա սիստեմից է, որը պետք է վերանայվի: Պակասները մեր սիստեմի մեջ է, գործելակերպը պիտի փոխվի և աշխատանքների

վերանայում պետք է լինի: 1969 թվականին «ուսումնասիրող հանձնախումբ» կյանքի կոչեցինք և աշխատանքներ տարեց, եթե այդ հանձնախումբը լիներ և շարունակեր իր աշխատանքը հիմա ինչքան տեղեկություններ ու ուսումնասիրություններ կփոխանցեր մեզ: Նման բան չունենալով դժվարանում ենք ասելու թե մյուս տարի ինչ է լինելու: Եթե նպատակասլացություն չլինի և միայն ամօրյա հարցերով զբաղվենք չենք կյարող նախատեսել նույնիսկ մի տարի հետոն: Թեմական խորհուրդը մխրտճված է ամօրյա և ռուտին գործերով, հետևաբար կրկնում եմ իմ տարիների ասածը՝ նկատի առնենք մի ուսումնասիրող մարմին, որ զուգորդի Պատգամավորական ժողովի դիվանին և պատասխանատու կլինի ՊԺ-ին: Այս ուսումնասիրող մարմինը կը օժանդակի բոլոր մարմիններին:

### Երկու պատգամավորներ հրաժարվեցին ՊԺ-ից

ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովի Մայիսի 10-ի նիստում ընթերցվեց Հեշմաթիեի թաղամասի պատգամավոր Տիկ. Հրաչուհի Եսիհա Մասիհի և Նարմաթ թաղամասի պատգամավոր Ղևոնդ Արմինե Ղազարյանի հրաժարական նամակները: Հրաժարվելու պատճառները նշված էր որպես երկարատև ճամբորդություն, ուրիշ խոսքով արտագաղթելու պատճառով: Սրանք գրավոր ներկայացրած բացակա պատգամավորներն են, սակայն գոյություն ունեն բացակա 2-3 պատգամավորներ ևս, որոնք երկար ժամանակ է, որ չեն ներկայանում ՊԺ-ի նիստերին:

Արդյոք մոր պատգամավորներ պետք է ընտրվեն, արդյոք անձնափոխանորդները պետք է փոխարինեն հրաժարված պատգամավորներին, թե պետք է այսպես քաջ տալ մինչև նոր ՊԺ-ի ընտրություններ:

Պատգամավորական ժողովի կանոնագրության հայերեն օրինակի մեջ նշված է, որ պետք է անձնափոխանորդներն փոխարինեն հրաժարված պատգամավորներին, սակայն պարսկական օրինակի մեջ նշված է, որ պետք է ընտրություն կատարվի: Այստեղ մնում է ՊԺ-ի դիվանին թե ինչպիսի ընթացք է տալու այս հարցին: 12-րդ ՊԺ-ի ընթացքում Պրն. Արտավազ Բաղումյանը երկար բացակայություններից հետո, վերջապես Հայաստան մեկնելու պատճառով ներկայացրեց իր հրաժարականը, մի խումբ պատգամավորներ ենթադրում էին, որ պետք է նրան փոխարինի Վիլա թաղամասի առաջին անձնափոխանորդը, սակայն քանի, որ այդ անձնավորությունը մեր համայնքի հարգարժան ազգային գործիչ և բարերար Պր. Լևոն Ահարոնյանն էր, և նա որպես անկախ թեկնածու էր մասնակցել, ժամանակի ՊԺ-ի դիվանը ընթացք չտվեց և հարցը այսպես մնաց մինչև հաջորդ ընտրություններ:

Պիտի հուսանք, որ այս անգամ չի ոտնահարվի այդ թաղամասերի ժողովրդի իրավունքը և ընտրություն կը կատարվի կամ էլ նրանց կը փոխարինեն անձնափոխանորդները:

### «Իրանի Տեղեկատու» գիրքը՝ Հայերենով

2005 թվականին Հայաստանում լույս է տեսել Իրան-Տեղեկատու գիրքը, Ռաֆայել Թադևոսյանի հեղինակությամբ: Գրքում ընդգրկված են հետևյալ բովանդակություններ՝ 1-Ընդհանուր տեղեկություններ, 2-Ռեկիեթ- Իրանի Ֆիզիկաաշխարհագրական կարգավիճակը, 3-Ձրագրություն և կլիմա, 4-

Բնակչություն և կրոն, 5-Պետական կարգ, 6- Ձինված ուժեր, 7- Տնտեսություն, 8- Մշակույթ, 9- Թեիրան:

Գիրքը անդրադառնում է նաև հայ-իրանական և Հայաստան-իրան որոշ հարցերին: Գիրքը պատրաստված է լայն հասարակայնության համար:

Գրքին կցված է մի աշխարհագրական քարտեզ՝ Իրան-իրանահայ համայնք բովանդակությամբ:

## «Տեղեկատու-Նամակ»

Ուրախությամբ ստացել ենք Հայ ճարտարապետների ու ճարտարագետների Միության «Տեղեկատու-Նամակ» համար 209-210 Մարտ-Ապրիլ պարբերաբերքը: Թերթում ընդգրկված են հետևյալ նյութերը՝ 1-Պահանջատիրական հոգով, Է 3-ի ստորագրությամբ, 2- Միության անցուդարձ գատկական հանդիպում և Ֆիլմի ցուցադրում, 3- Լուրեր միությունից, 4- Հիշարժան լուսանկար, որտեղ միութենականները իրենց 21-րդ տարվա հանդեսի լուսանկարը համարներով և անուն անգագանուններով ներկայացրել են պարբերականում, 39 հոգի: 5- Հարցազրույց երկու հայ ճարտարապետների հետ, որտեղ պարսկերեն «Մենար» թերթն է ունեցել, 6- Աղթամարի Ս.Խաչ եկեղեցին թանգարանի վերածվեց, 7- Նոր երկու անդամների ներկայացում և մի քանի կարճ հայտարարություններ: Այս պարբերաբերքը 8 էջանոց է:

## Հայ ուսուցիչները անվճար կը օգտվեն բուժարանից

Մայիս ամսվա Պատգամավորական ժողովների ընթացքում ԹԽՃը հայտատարեց, որ մի շարք մարդիկ առանց որևէ դրամ մուծելու կարող են օգտվել Հայոց Ավետիսյան բուժարանի ծառայություններից: Այս որոշումը քանի տարի առաջ կայացել է բուժարանի խնամակալ մարմնի կողմից: Այս հարցը քանի ուսուցիչ պատգամավորների մոտ զայրուք առաջացրեց թե ինչպես նրանք տեղյակ չեն եղել նման որոշումից և նման որոշումը չի սփռվել ուսուցիչների վրա: Այստեղ բացակայել է տեղեկատվությունը կամ նման որոշումի թափանցիկ հայտարարությունը:

## «Եկեք չծերանանք դեռ ծերության ճամփին չհասած»

Ծերությունը կյանքի անխուսափելի մի մասն է և անկախ մեր կամքից հյուսված է բոլորի կյանքին և հեռացնելը անկարելի է: Ծերերի գոյությունը աշխարհի իրականություններից մեկն, որը ընդունելով այն պետք է պահպանենք նրանց, զնահատենք իրենց կրած դժվարությունները և հոգեպես ու բարոյապես օժանդակենք նրանց այս կյանքի փուլը հաճելի դարձնելու համար, այդ գործում պետք են բարեգործ անձնավորություններ, կազմակերպություններ և հատուկ կենտրոններ, որոնք արդեն ստեղծվել են տարիներ առաջ Թեիրանի տարբեր թաղերում, ինչու չէ նաև հայկական երկու բազմաշատ թաղերում: Շուրջ 4 տարի առաջ առաջին աշխատանքները սկսեցին Սասուն «Նարմաք» թաղամասում «Իրանի Աշխարհատեսների Հայկական կենտրոն» անունով, որը ընդառաջվեց ժողովրդի կողմից: Դրանից երկու տարի անց՝ 2005 թվից սկսեց Զեյթուն «Մաջիդիե» թաղամասի աշխատանքները, աշխատանքների նպատակն է զարգացնել տարեցների հասարակական կյանքը, մշակույթը և ընդարձակել միմյանց հանդես հարաբերությունները և այդ ամենը կատարվում է



տարբեր ծրագրերով օրինակ. էքսկուրսիաների կազմակերպմամբ, տարբեր դասարաններ, այցելություն և ազգային կենտրոններ, հատկապես եկեղեցիներ և այլն: Այժմ նոյն թափով շարունակվում են ակտիվ ծրագրերը. օրինակ 2007 թվի, նորտարվանից սկսած տոնվել են բոլոր հայկական տոները և հիշվել են կարևոր ու նշանավոր օրեր: «Զեյթուն» թաղամասի աշխարհատեսների հայկական կենտրոնը մամուլի կարևորությունը զգալով, նախաձեռնել է հրատարակել եռամսյա «Աշխարհատես» պարբերականը: Վստահ ենք քանի, որ ժողովուրդը կանգնած է մեր կողքին և օջանդակում է մեզ, մենք մեր աշխատանքը շարունակվելու ենք:

*«Լույս» ամսագրի համար «Մաջիդիե» թաղամասի աշխարհատեսների կենտրոնի վարչության նախագահ Այրա Գրիգորյան*

## Ամառային Աշխատանքներ

Կրկին անգամ ուսումնական տարեշրջանը ավարտվեց, և կրկին անգամ ծնողների մտահոգությունն է ինչպիսի միջոցներով իրենց երեխաներին զբաղվեցնել իրենց ամառային ազատ ժամերը: Որպեսզի այս երկար ու ծիկ ազատ ժամերը դրական և արդյունավետ ընթացքով օգտագործեն:

Իրանի բոլոր հայկական մարզա-մշակութային միությունները նախաձեռնում են ամառային աշխատանքներ անց կացնել մանուկների և պատանիների համար: Որպես օրինակ այս տարի ևս անցեալ տարիների նման Հ.Մ.Ս «Րաֆֆի» Համալիրը կազմակերպել է հետևեալ աշխատանքները՝ 1- ֆուտբոլ, 2-բասկետբոլ, 3- սկեյտ և փոքրիկների համար ընդհանուր բազմաբնույթ աշխատանքներ ընդ որում կարելի է նշել երգ, ասումը, թատրոն, նկարչություն և ձեռքի աշխատանքներ:

Համալիրի ամառայի աշխատանքների կողքին սկսվել է նեո ու աղեղի մարզաձևի աշխատանքները որտեղ համալիրը փայլալույս է կարողանա ունենալ որպես նոր մի մարզաձև որը կը կարողանա իր երկարատև ջանքերի շնորհիվ մասնակցությունը բերել Թեիրանի և Իրանի մասշտապով մրցություններին:

*Լույսի Թղթակից : Մարիեթ Նազարյան*

## Աշխարհատեսները Բոլորանում

Թեիրանի Նարմաք թաղամասի աշխարհատեսների հայկական կենտրոնը համբարձումը լավ անցկացնելու նպատակով, Հինգշաբթի Մայիսի 17-ին, իր անդամներին



տարեց Իսֆահան նահանգի հայկական Բոլորան գյուղ: Ծրագրին մասակցում էին 40 տարեցներ:

Առաջին օրը նրանք այցելեցին Իսֆահանի տեսարժան վայրեր, օրինակ Մենար Ջոնբան, Չելսոթուն, Սօֆի սար և հայկական Վանքը: Հետո մեկնեցին Փերիո գավառի Բոլորան գյուղ համբարձունը տօնելու նպատակով: Կենտրոնի ատենապետ Տիկ. Ավարդ Աբրահամյանը բացատրություն տվեց համբարձման մասին և հետո խաղարկվեց մեր հին ավանդական բախտախաղ՝ ջան գյուլունը: Նրանք ունեցան երգ ու պար: Բոլոր խարհատեսները լավ հուշերով վերադարձան Թեհրան:

*Լուսի թղթակից՝ Լիդա Խանբաբայի*

## «Րաֆֆի» Ը-ի կանաչապատված դաշտի բացման արարողություն

2007 թ.-ի Հունիսի 29-ին տեղի ունեցավ Նարմաք քաղաքամասի «Րաֆֆի» ՄՍ Համալիրի Ֆուտբոլի դաշտի բացման արարողությունը: Հազարից ավել մարդ էր հավաքվել դաշտի բացումը կատարելու համար: Սկզբում՝ Ֆուտբոլի դպրոցի սաները, որոնց թիվը 100 հոգուց ավել էր, մարտական ռազմաձևի մարզիկները, համալիրի երկու պարախմբերից մեկական խմբակ և սկաուտների մի խմբակ տողանցքով մուտք գործեցին արհեստական կանաչապատված նոր դաշտ: Հնչեց Իրանի Իսլամական Հանրապետության հիմներգը, որից հետո բացման խոսքով հանդես եկավ համալիրի նախագահ դկտ. Ռուբիկ Սարգսյանը:

Այնուհետև յուրաքանչյուր բաժին կատարեցին ցուցադրական շարժումներ ու վարժություններ և երկու հայկական պար: Թեհրանի 8-րդ շրջանի քաղաքապետ ինջիներ Ջարեն Ելույթ ունենալով շնորհավորեց թաղի և ընդհանրապես հայությանը այս նոր դաշտի կապակցությամբ ու բացատրություններ ներկայացրեց քաղաքապետարանի կողմից երկրի մասշտաբով կանաչապատման ծրագրերի մասին:

Գնահատվեցին և նվերներ հանձնվեցին համալիրի 6 օրինակելի մարզիկների: Ելույթ ունեցավ Իրանի նախկին հայտնի Ֆուտբոլիստ և մարզիչ պրն. Ասեֆին: Որպես հիմնադիրների ներկայացուցիչ հանդես եկավ պրն. Պետրոս Աբգարյանը: Այնուհետև համալիրի երեցներն ու վարժությունը որպես անակնկալ հատուկ գնահատագրով և նվերով բարձր գնահատեց պրն. Պետրոս Աբգարյանի ջանքերը, որ տարել է ու տանում է համալիրի համար և հրավիրեց Իրանի ազգային հավաքականի տնօրեն պրն.

Քաշանիին՝ նրա գնահատագրի և նվերի հանձնման համար:

Վերջում բոլոր ներկաները դիտեցին Ֆուտբոլի մրցություն «Րաֆֆի» համալիրի խմբի և Հայաստանի գալիք համահայկական խաղերին մասնակցող հավաքականի միջև: Վերջում հյուրերը տեղափոխվեցին փոքր սրահ հյուրասիրության և մտերմիկ գրույցի համար:

## Իրան

### Իրանի դեմ սահմանված պատժամիջոցների ռեժիմին 73 երկիր է միացել

**ՄԱԿ, 22 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Իրանի միջուկային ծրագրերի կապակցությամբ այդ երկրի դեմ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պատժամիջոցների ռեժիմին արդեն 73 երկիր է միացել: Այդ մասին հայտնել է ՄԱԿ-ի ԱԽ-ի նախագահ, Բելգիայի մշտական ներկայացուցիչ Ջոան Վերբեկեն: Հինգշաբթի օրը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում դռնփակ կոնսուլտացիաներ են կայացել միջուկային չտարածման ռեժիմի եւ Թեհրանի դեմ սահմանված պատժամիջոցների ռեժիմի կատարման հարցի շուրջ:

### ԻՐԱՆԸ ՄՏԱԴԻՐ Է ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՆԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իրանը քննության է առնում Վրաստանի եւ Հայաստանի տնտեսության մեջ մոտ 1-ական մլրդ դոլարի ներդրումներ անելու ծրագրեր: Դրանց հաջողության դեպքում Իրանը կարող է դառնալ տարածաշրջանի ամենաազդեցիկ պետությունը: Մոսկվային նախազգուշացնող այսպիսի նյութ է հրապարակել «Նեգալիսիմայա գազետա» թերթը: Ռուսաստանյան ներդրումների ծավալը 2006 թ. Վրաստանում չէր անցնում 30 մլն դոլարից, իսկ Հայաստանում նախատեսվում է ներդնել մինչեւ 1,5 միլիարդ:

Իրանական IRNA գործակալությունը եւ վրացական ԶԼՄ-ները մեջբերում են Իրանում Վրաստանի դեսպան Լեւան Ասաթիանիի այն խոսքերը, թե «կողմերը» բանակցում են տրանսպորտի ոլորտում բարենպաստման ռեժիմ մտցնելու շուրջը: Վրաստանին հետաքրքրում է իրանական 70 միլիոնանոց շուկան:

Վաշինգտոնում մտահոգ են Թեհրանի ծրագրերից, բայց առայժմ խնայում են ԱՄՆ-ի ազդեցությանը ենթակա Վրաստանին եւ քննադատում են Հայաստանին: ՀՀ-ում ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Էնթընի Գոդֆրին դժգոհ է հայ-իրանական հարաբերությունների ընդլայնումից: «Ուզում ենք հիշեցնել, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երկու բանաձեւ է ընդունել Իրանում գործարքների եւ ներդրումների կրճատման վերաբերյալ», ասել է նա Ռոյթեր գործակալության թղթակցին:

Ի պատասխան՝ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը տարակուսանքով լրագրողներին հայտարարել է. «Բոլոր երկրների հետ Հայաստանի հարաբերությունները բավականաչափ թափանցիկ են, եւ դրանցում մտահոգիչ որեւէ բան չկա»:

## Հայաստան

### Աշխարհի 35 երկրների 270 աստղաֆիզիկոսներ հայտ են ներկայացրել Երեւանում մասնակցելու «Մեր անկայուն տեգերը» միջազգային աստղագիտական համագումարին

**ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Երեւանում օգոստոսի 20-25-ն անցկացվելիք եվրոպական եւ հայկական աստղագիտական ընկերությունների համատեղ «Մեր անկայուն տեգերը» միջազգային աստղագիտական համագումարին մասնակցության հայտ են ներկայացրել աշխարհի 35 երկրների 270 աստղաֆիզիկոսներ: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեց համագումարի կազմակերպիչ, Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանը, համագումարի ընթացքում կանցկացվի 8 գիտաժողով եւ 6 հատուկ նիստ:

### Ո՞Վ Է «ՐԱՅԱՍՏԱՆ» ԸՆԴՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ՏՆՕՐԵՆԸ

Խմբագրությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասարակայնության հետ կապերի բաժնից հոգաբարձուների խորհրդի հերթական նիստի մասին տեղեկություն ստացավ, որտեղ ներկայացվում են նաեւ հիմնադրամի գործադիր վարչության նոր գործադիր տնօրեն Վահե Աղաբեկյանցի կենսագրական տվյալները:

Մասնագիտությամբ ինժեներ Վահե Աղաբեկյանցը Հայաստան է տեղափոխվել 1998 թ. եւ 1999 թ-ից աշխատել է որպես արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի խորհրդական, իսկ վերջին մեկուկես տարիներին զբաղվել է մասնավորապես գյուղական համայնքների զարգացման ծրագրով:

Թեհրանում ծնված Վահե Աղաբեկյանցը կրթությունը ստացել է Միացյալ Նահանգներում, որտեղ հիմնել է մի քանի հաջողված բիզնես կազմակերպություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ համագործակցելով աշխարհի 500 խոշորագույն կազմակերպությունների հետ: «Ես հավատում եմ «Հայաստան» հիմնադրամի առաքելությանը: Սա եզակի կառույց է, որ համախմբում է աշխարհասփյուռ հայերին եւ հնարավոր է դարձնում նրանց միասնական օժանդակությունը Հայաստանի զարգացմանը: Ես այն բախտավոր սփյուռքահայերից եմ, որը երազել է անկախ Հայաստանի մասին, եւ այսօր հնարավորություն ունեմ Հայաստանը դարձնել մեր երազների երկիրը», հոգաբարձուների խորհրդի ժամանակ նշել է Վահե Աղաբեկյանցը:

### Երեւանում անցկացվում է Ատամնաբույժների միջազգային գիտաժողով

**ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Երեւանում անցկացվում է Ատամնաբույժների միջազգային գիտաժողով, որին մասնակցում են ութ երկրներից ժամանած մասնագետներ: Կքննարկվեն ոլորտում

կիրառվող նորարարություններին վերաբերող հարցեր: Ինչպես լրագրողներին ասաց Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիայի նախագահ Աշոտ Գեւորգյանը, հանրապետությունն այսօր ապահովված է որակյալ ատամնաբույժներով, խնդիրներ կարող են լինել միայն հեռավոր շրջաններում:

### Ամենայն Հայոց կաթողիկոսը հայրապետական գրով հաստատել է Ֆրանսիայի թեմի առաջնորդի ընտրությունը



**ԷԶՄԻԱԾԻՆ, 25 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Ն.Ս.Օ.Տ.Տ.

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատել է գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Ջաքարյանի՝ որպես Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդի ընտրությունը՝ հունիսի 23-ին հայրապետական գիր ուղղելով Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանին, թեմական պատգամավորական ժողովի ատենապետ Կարպիս Ջրբաշյանին եւ թեմական խորհրդի ատենապետ Գրիգոր Փափագյանին:

### Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ ընդունել է Արեւմտյան թեմի կամավորականներին

**ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Հունիսի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Արեւմտյան թեմի SIMA (Քրիստոնեական երիտասարդական առաքելություն Հայաստան) կամավորական խմբի շուրջ 30 երիտասարդների՝ Մատթեոս սարկավազ Աշի ուղեկցությամբ: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Մայր Աթոռի մամլո դիվանից, Նորին Սրբությունը ողջունեց երիտասարդներին եւ իր ուրախությունը հայտնեց՝ նրանց տեսնելու Մայր Հայրենիքում:

## Միջազգային

### Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Լամլետ Մովսիսյանը պարգևատրվել է Պատվո շքանշանով

**ԹԲԻԼԻՍԻ, 21 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Ախալքալաքի շրջանից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Համլետ Մովսիսյանը Վրաստանի նախագահի հրամանագրով պարգևատրվել է Պատվո շքանշանով: Խորհրդարանական կառավարական բարձր պարգևին արժանացել է Վրաստանի ժողովրդավարության եւ վրաց ու հայ ժողովուրդների միջև բարեկամության զարգացման գործում ներդրած ավանդի համար:

**Միխայիլ Սահակազվիլին այցելեց Ջավախք**

**Ախալքալաք. 21. Հունիսի** Այսօր ժամը 17.00-ի սահմաններում Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակազվիլին, մեկ ամսյա սպասումներից հետո, վերջապես այցելեց Ջավախք՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների նորակառույց մարզահամալիրների բացման արարողությունը կատարելու:

Նախագահի այցը, բացառությամբ շրջանի ղեկավարության ներկայացուցիչների, ովքեր միայն գրանցվելուց հետո մարզահամալիր մուտք գործելու իրավունքն ստացան, Ջավախքի բնակչությունից շատերը չնկատեցին:

Նշենք, որ Նախագահի այցով կատարված մարզահամալիրի բացման արարողությունը թե՛ Ախալքալաքի, և թե՛ Նինոծմինդայի շրջաններում տևեց ընդամենը 10 րոպե, իսկ նախքան նախագահի Ախալքալաք մուտքը փակվեցին գլխավոր ճանապարհները և անջատվեցին հեռախոսակապերը:

Նինոծմինդայի շրջանում նախագահի մարզահամալիր մուտքը, ինչին ներկա էին շրջանի ղեկավարության ներկայացուցիչները, Սամցխե-Ջավախքի նահանգապետ Գ. Խաչիձեն և Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հենզել Սկոյանը, ողջունեցին շրջանի երաժշտական դպրոցի սաները:

Ախալքալաքի շրջանի մարզահամալիրում բացման արարողությունը կատարվեց նախագահի ողջույնի խոսքով, որից հետո Սահակազվիլին խոստացավ ջավախքցիներին Վրաստանի պետական բուհերում պետության աջակցությամբ տեղ հատկացնել, խոստացավ, նաև, որ պետք է հովանավորի Ախալքալաքի նախկին «Աբուլ» ֆուտբոլի թիմը և «Ռուստավի» ֆուտբոլի թիմին, որը Վրաստանում գրավել է առաջին տեղը, հանձնեց մրցանակը:

**Հասարակական**

**Շին ցավեր նոր մոտեցումներ**

ԹՀԹ-ի Կրթական Խորհուրդը երկու տարի առաջ որոշում էր ներկայացրել, որ բոլոր միություններին իրավունք տալ մշակութային և հասարակական աշխատանքների հայտարարությունները փակցնել հայոց ազգային դպրոցներում: Արդյո՞ք սա վերաբերում էր բոլոր միություններին, դեռ հայտնի չէր, մինչ այն ժամանակ, որ ՀՄՄ «Ռաֆֆի» Համալիրի երգչախմբի հայտարարությունը ուղարկվեց Կրթական Խորհուրդ վավերացնելու՝ կնքելու և «Սողոմոնյան» ու «Թովմասյան» դպրոցներում փակցնելու համար: Այս երևույթը դարձավ կողմնորոշվելու կամ դիրքորոշվելու առիթ, «ոչ քույր» կարող ենք անվանել «եղբայր» ժողովրդական միությունների նկատմամբ: Կրթական Խորհուրդը սկզբից որևէ արգելք չտեսավ, բայց որոշ ժամանակ անց, ասաց պետք է դիմել թեմական Խորհրդին, ԹԽ-ն և հանձնիս ԹԽ-ի նախկին նախագահ Պրն. Նորայր Արամյանն ասաց մենք խոսել ենք ԹԽ-ում և բոլոր անդամները համաձայն են և որևէ խտրականություն չկա, բայց դա Կրթական Խորհրդի հարցն է և նրանք պետք է կողմնորոշվեն: Կրկին ԿԽ-ին դիմելով, ԿԽ-ի նախագահ Էմիլ Մնացականյանն անկեղծ ասաց, որ,- «Դուք գործ ունեք Դաշնակցական

կուսակցության հետ»: Այս հարցը հասավ Սրբազան Հայր Սեբուհ Արք. Սարգսյանին, նա էլ դատապարտելով այդ հարցը խոստացավ դրական լուծում տալ: Վերջում հարցը քննարկվելիք առարկա դարձավ Պատգամավորական ժողովում և ընթերցվեց «Ռաֆֆի» Համալիրի նամակը ուղղված ՊԺ-ին: Այդտեղ արտահայտություն եղավ, որ սա կապված է հին ցավերի հետ և առանձին չի լինի քննարկել: Առաջարկ եղավ և որոշվեց, որ ՊԺ-ի դիմանը կազմակերպի մի հանդիպում, որտեղ կմասնակցեն համալիրի, ՊԺ-ի դիմանի, ԹԽ-ի, ԿԽ-ի ներկայացուցիչներ և մի քանի պատգամավորներ: Պատգամավորական ժողովը ցանկություն հայտնեց, որ ժողովին պետք է ամբողջովին տեղյակ պահեն այդ հանդիպման արդյունքից:

Մենք այս երևույթը չենք դիտում որպես, լոկ մի հայտարարության փակցնելու թե չփակցնելու խնդիր, այլ մի մոտեցում, որ ցուցաբերվելու և կողմնորոշվելու է մեր ազգային իշխանության ղեկավարությունը հանդեպ «եղբայր» միությունների և այլախոհների նկատմամբ: Անցյալում նրանք խտրականությամբ են մոտեցել հարցի, բայց կարծում ենք ժամանակներն ու խնդիրների բնույթը փոխվել են:

ՊԺ-ում այս հարցի արժանունը առիթ դարձավ որոշ արտահայտություններ «հին ցավեր»-ի մասին, համոզմունք հայտնվեց, որ այս ցավերի մասին պետք է խոսել: Սխալմունքներ և սխալ դիրքորոշումներ եղել են երկու կողմից, բայց 28 տարի առաջ: Այս 28 տարվա ընթացքում շատ բաներ են փոխվել: Եթե նման քննարկումները կնպաստի ապագա համագործացության ծավալի լայնացման և որոշ հարցերի պարզաբանմանն ու միմյանց մոտեցմանը պետք է ողջունելի համարել դա: Կարծում են ներկայիս բոլոր կողմերի համընդհանուր գծերը շատացել են, բոլորս սոցիալապես ու քաղաքականապես ավել ենք հասունացել և ավելի լավ ենք ըմբռնում մեր երկրի՝ Իրանի, համայնքի ու ազգային շահերը:

Կը խնդրեինք այս կապակցությամբ եթե կարծիքներ կամ առաջարկներ գոյություն ունեն մեր սիրելի մտավորականների ու ընթերցողների մոտ, արտացոլեն «Լույս» ամսագրում, որը միշտ պատրաստ է արտացոլելու բազմաբնույթ և տարբեր կարծիքներ անկախ անձի պատկանելությունից որևէ շրջանակի:

*Դկտ. Ռուբիկ Սարգսյան*

**Ստացված գրություն**

Համայնքում խտրականությունը վերացնելու ճամբին Ստացել ենք մի բողոքի և խղրանքի նամակ Թեհրանի միարք միությունների կողմից, որը առանց մենկնաբանությամբ ներկայացնում ենք Ձեր ուղարկությամբ:

*Խմբագրություն*

*Թեհրանի հայոց թեմի առաջնորդ  
Գերաշնորհ Տ. Սեպուհ Արք. Սարգսեան  
Գերշ. Սրբազան Հայր և Հարգարժան Թեմական  
խորհուրդ*

Սոյն գրությամբ դիմում ենք հարգելի խորհրդիդ, ուշադրությունը կենտրոնացնելու եւ տնօրինությունը հայցելու, այն ուշագրավ հարցի վերաբերյալ, որն անմիջականորեն կապված է մեր համայնքի մարզական կյանքի բարեկարգմանը:

Խնդիրը նրանում է, որ սփյուռքյան կամ Հայաստանյան մարզական կենտրոնների միջոցով հաճախ կազմակերպվում են Համահայկական մասշտաբով մրցություններ, սակայն բոլորիս հասկանալի պատճառով, մրցություններին մասնակցելու հայտն ու հրավերը, կազմակերպիչ կառույցների կողմից հղվում է ՀՄՍ «Արարատ» կազմակերպության հասցեին: Իհարկե, դրա մեջ որևէ միտում չկա, քանի որ ՀՄԱ Կ-ը առավել համահայկական ճանաչում ստացած կազմակերպություն է, թե՛ իր համբավով, եւ թե՛ գորությամբ:

Սակայն, այն ինչ մտահոգում է մեզ, նման պարագաներում մրցություններին մասնակցելու հնարավորությունից փաստորեն զրկվում են մեր համայնքի մյուս միությունների մարզիկները, որովհետև հրավերների հղումից անտեղյակ լինելով, չեն կարողանում համապատասխան մարզախումբը կազմել եւ ուղարկել մրցությունների:

Առ այդ, մեր խնդրանքն է, թեհրանի հայոց թենական Խորհուրդը մի գրությամբ ԼՂՀ-ի նախագահի գավաթի Միջազգային խաղերի եւ ՀՄԸՄ-ի կազմակերպած խաղերի վարիչ մարմնին տեղյակ պահի իրենց համահայկական մասշտաբով կայանալիք խաղերի հրավերը ուղղեն հենց թեհրանի հայոց թենական Խորհրդին, այնուհետև ազգային առաջնորդարանի գծով հրավերի մասին տեղյակ պահել թեմիս բոլոր մարզա-մշակութային միություններին: Այսպես հնարավոր կը լինի մեր համայնքի միությունները եւ մարզիկները առավել գործոն եւ ակնառու մասնակցություն ցուցաբերեն ցանկացած մարզախաղերին: Նույնպես մեր բաղձանքն է այս ձևով վերացնել անցանկալի Խտրականությունը քույր միությունների միջեւ:

Յարգանքով՝  
ՀՄՍ «Սիփան» Միություն  
ՀՄՍ «Րաֆֆի» Համալիրմիություն  
Հայ «Համալսարանական» Միություն  
«ԻԱՄՄ» Միություն  
ՀՄ «Նայիրի» Միություն

## Թենական Խորհրդի երկամյա գեկույցը ՊԺ-ում (Մաս – 1)

*Թեհրանի Հայոց Թենի Թենական Խորհրդի գեկույցը, որը ներկայացվել էր Սայիս ամսվա ՊԺ-ի նիստերին ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:*

ԽՄԲ.

Հաշվի առնելով համայնքի օրըստօրե աճող պահանջները, որոնք թելադրվում են ապրելու ավելի նպաստավոր պայմանների ձգտումից, իսկ մյուս կողմից երկրի հասարակական դրվածքից, նկատելի չափով աճում և բազմակողմանիորեն ընդարձակվում են թե նման մարմինների ու կազմերի թիվը և թե դրանց աշխատանքային բովանդակությունը և ի պահանջի իրավասության սահմանները: Նշված երևույթների համար որպես օրինակ կարելի է հիշել մարմնամտային Հանգարված երեխաների «Ակունք» կենտրոնը, Վաչե Հովսեփյան համալիրը, ոչ շահադիտական դպրոցների ստեղծումը և այլն:

## Կրթական Խորհրդի մասին գեկույց

Այս կազմում անդամակցում են 10 հոգի, նկատի առնելով համայնքի ուսումնական և դաստիարակչական հարցերը, որը իր մեջ է ընդգրկում մեր համայնքի մի մեծ խմբին, այսինքն մանուկներին ու պատանիներին, Կրթական Խորհրդին վերապահված է մեծ և կարևոր դեր կատարել թենական Խորհրդի գլխավորությամբ առաջ տարվող համայնքային գործերը: Այս իմաստով ԿԽ-ի աշխատանքային թվին են պատկանում ազգային դպրոցները և դպրոցական կյանքը: ԿԽ-ի աշխատանքները տարվում են երկու մարզում՝ ներքին և արտաքին: Ներքին մարզում ԿԽ-ը ընթացք է տալիս և հետևում է մանկապարտեզներից մինչև միջնակարգ և մախահամալսարանական օղակներում առկա բոլոր հարցերին, որոնց ընդհանուր գլուխներն են կազմում աշակերտություն, ուսուցչություն, դպրոցներում ծառայող պաշտոնեություն, դասագրքեր, դպրոցների ներքին միջավայր, հայեցի դաստիարակություն, ազգային նկարագրի և ազգային ավանդույթների պահպանման իմաստով և նյութական բաժիններ:

ԿԽ-ը իր որոշումները իրագործում է դպրոցների ծնողական Խորհուրդների, մանկապարտեզներում կենտրոնական հոգաբարձության իսկ ոչ շահադիտական դպրոցներում խնամակալ մարմինների միջոցով, որոնցից յուրաքանչյուրի համար աշխատանքային ծրագիր, իրավասության և պատասխանատվության սահմաններ է ճշտում: Ներկայումս ազգային առաջնորդարանի կողմից վճարվող ուսուցիչների թիվը կազմում է 141 հոգի: ԿԽ-ն իր որոշումները և մտահոգումները իրականացնում է իրեն ենթակա հանձնախմբերի միջոցով, որոնք են ուսումնադաստիարակչական՝ 6 հոգի, ուսման մակարդակը բարձրացման ուսումնասիրող հանձնախումբ՝ 4 հոգի, մշակութային՝ 4 հոգի, մարզական՝ 6 հոգի, նյութական՝ 5 հոգի, դպրոցների վերադասավորում՝ 3 հոգի, Խորհրդատուներ՝ 8 հոգի, հանրային կապ՝ 5 հոգի, դասագրքերի՝ 4 հոգի, ընդհանուր քանակը՝ 47 հոգի:

Արտաքին մարզում ԿԽ-ն մշտական կապի մեջ է երկրի կրթադաստիարակչական նախարարության, հայ հարանվանությունների և Իսլամական Խորհրդարանում հայ պատգամավորի և նրա գրասենյակի հետ: ԿԽ-ն թենական Խորհրդի միջոցով կապի մեջ է նաև Հայաստանի հետ մի շարք աշխատանքների իրականացման գծով, որոնցից կարելի է թվարկել աշակերտական ճամբարներ, դասագրքեր կազմել, կրթական Խորհրդատվություններ, վերաորակավորում և այլն:

ԿԽ-ը իր իր ունեցած զանազան խնդիրների բերումով կապի մեջ է կրթադաստիարակչական նախարարության հետևյալ բաժինների հետ՝ փոքրամասությունների դպրոցական մասերի վերահսկիչ հանձնախումբ, կրթադաստիարակչական նախարարության Խորհրդարանի գրասենյակ, Թեհրանի կրթադաստիարակչական կազմակերպություն, դասագրքերի հեղինակման հիմնարկ, կրթադաստիարակչական տարբեր քաղաքների հիմնարկ, Թեհրան նահանգի բեհգիստի ընդհանուր հիմնարկ մանկապարտեզների հարցով:

ԿԽ-ի աշխատանքների ծրագրերի հիմնական գլուխներն են կազմում՝ կրթական մակարդակի բարձրացում, դպրոցների տնտեսական հարցերի ամրացում, դպրոցների վարչական կարգի ամրացում, կրթադաստիարակչական

նախարարության հետ կապերի զարգացում, դպրոցների վերադասավորում, մարզամշակութային և առողջապահական ասպարեզ, համայնքային հարաբերության զարգացում, ինֆորմատիվ կենտրոն: Վիճակագրության առումով Թեհրանի հայոց դպրոցները 1385-86 ուսումնական տարում մանկապարտեզի, տարրականի, ուղղեցույցի, միջնակարգի և նախահամալսարանի օղակներում գոյություն ունի հետևյալ պատկերը՝

- 1- Մանկապարտեզներ և նախակրթարաններ.- Էլիաս Սերաբյան՝ 99 և 72 հոգի,
  - 2- Սասուն մանկապարտեզ՝ 87 և 97 հոգի:
  - 3- Ա. Ահարոնյան մանկապարտեզ՝ 132 և 110 հոգի:
  - 4- Մարիամ մանկամսուր՝ 30 և 16 հոգի:
- Մանկապարտեզների և նախակրթարանների ընդհանուր գումարը կազմում է 643 հոգի:

**Տարրական բաժին**

- 1- Մարիամ օրհորդաց՝ 88 հոգի, Մարիամ տղայոց 93 հոգի:
  - 2- Արաքս օրհորդաց՝ 219 հոգի:
  - 3- Գուլբենգյան տղայոց՝ 164 հոգ:
  - 4- Ռոստոմ տղայոց՝ 144 հոգի, օրհորդաց 103 հոգի:
  - 5- Արարատ օրհորդաց 201 հոգի:
  - 6- Թունյան օրհորդաց 333 հոգի:
  - 7- Նայիրի տղայոց 342 հոգի:
  - 8- Գոհար տղայոց 282 հոգի:
  - 9- Ալիշան տղայոց՝ 32 հոգի:
- Ընդհանուր գումար 1975 հոգի:

**Ուղղեցույց բաժին**

- 1- Մարիամ օրհորդաց՝ 67 տղայոց՝ 76 հոգի:
  - 2- Արաքս օրհորդաց՝ 160 հոգի:
  - 3- Գոհար տղայոց 55 հոգի:
  - 4- Ռոստոմ տղայոց 69 հոգի:
  - 5- Սահակյան տղայոց՝ 106 հոգի:
  - 6- Արարատ օրհորդաց՝ 148 հոգի:
  - 7- Թունյան օրհորդաց՝ 281 հոգի:
  - 8- Նայիրի տղայոց՝ 186 հոգի:
  - 9- Մարիամյան տղայոց՝ 150 հոգի:
  - 10- Ալիշան տղայոց 80 հոգի:
- Ընդհանուր գումարը 1348 հոգի:

**Միջնակարգ դպրոցներ**

- 1- Մարի Մանուկյան օրհորդաց՝ 265 հոգի:
  - 2- Սահակյան տղայոց՝ 78 հոգի:
  - 3- Սողոմոնյան տղայոց՝ 266 հոգի:
  - 4- Թովմասյան օրհորդաց՝ 262 հոգի:
  - 5- «Մարիամ» հաստատություն 131 հոգի:
  - 6- Քուշեշ Դավթյան՝ 120 հոգի:
- Ընդհանուր գումար 1122 հոգի:

ԿԽ-ի գործունեության մի շարք հարցեր Աշակերտության նվազեցման հարց: Ստորև ներկայացվում է ընթացիք և անցյալ տարվա ուսումնական շրջանի աշակերտության թիվը համեմատության համար:

	2005-2006	2006-2007	նվազում
1 Մանկապարտեզ	363	348	15
2 Նախակրթարան	349	295	54
3 Տարրական	2196	1975	221
4 Ուղղեցույց	1409	1348	61
5 Միջնակարգ	1294	1122	172
Ընդհամենը	5611	5088	523

# Մշակութային

## Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում

Իր «Կյանքիս հուշերից» Գրքից

### ԲԱՔՎԻՑ ՊԱՐՄԿԱՍՏԱՆ

Ինչպես արդեն ասացի, որբերին էնգելի տանելը ինձ էր հանձնվածի:

Մեծուվ մասամբ մանրիկ, տխեղծ երեխաներ էին որբերը, նրանք դեռ լավ քայլել չէին կարողանում, մի առ մի վերցնելով շոգենավ դրինք, բայց անվերջ էր նրանց շարքը, գալիս էին ու գալիս... Ժամեր ամբողջ տևեցին մինչև ծայրը կտրվեց: Այժմ պետք էր պարենի մասին հոգալ: Թաղետուր ընկավ բոլոր պահեստները, որը բռնի բանալ տալով, որի դուռը կոտրելով՝ հավաքեց բավական քանակությամբ շաքար, հաց և այլ ուտելիքներ ու փոխադրեց շոգենավը: Ժողովրդից շատեր, կին, երեխա, հետո նաև տղամարդիկ, մի քանի մտավորականներ ու սակավաթիվ զինվորականներ մտան նույնպես շոգենավը: Վերջապես մուրթ կոխեց և շոգենավը խարիսխը բարձրացնելով՝ հրաման ստացավ ճանապարհ ընկնելու:

Այս բոլոր ժամանակը (Բաքվում) կռիվը շարունակվում էր սուկալի կատաղությամբ, մերոնք մի կողմից պաշտպանում էին իրենց շարքերը, մյուս կողմից կանոնավոր կերպով հետ էին նահանջում, քաղաքը հետզհետե սեղմվում էր թշնամու օղակի մեջ. երբ մուրթն ընկավ պատերազմի գոռգոռոցը արդեն մեղմեց, բայց մերթ ընդ մերթ որոտում էին դեռ թնդանոթները՝ մի հանկարծական տխուր փայլատակյուն արձակելով, որ ցուլում էր ու անցնում: Մենք հետզհետե բացվում էինք դեպի ծովը: Ահա երևում է հեռուն փարոսը և ավելի հեռուն մթության մեջ ինչ-որ սովերագիծ, որ Նարգին կղզին են համարում: Մի քիչ առաջանալուց հետո, երբ քաղաքն այլևս կտրվում էր մեր աչքից, հանկարծ զինվորական մի պահականավ կանգնեցրեց մեզ: Ասացի, որ մեր շոգենավը աղբբեջանական էր. աղբբեջանցի էին նաև նավապետն ու նավաստիները, սրանք շատ լավ չէին տրամադրված դեպի մեզ, բայց բացի անսիրտի վերաբերմունքից առայժմ ուրիշ ոչինչ չէին կարող անել մեզ: Հենց որ զինվորական պահականավը մոտեցավ մեզ և մի քիչ հեռու կանգնած հարց տվեց, թե ովքեր ենք մենք և ուր ենք գնում, նավապետը շեփորով հայտնեց նրանց, թե նավի մեջ գտնվում են զինված հայեր, որ քաղաքից փախչում են. նավաստիները վախենում են նրանցից և չեն ուզում շարունակել ճանապարհը: Պահականավը պատասխանեց. «Գնացեք Ժիլոյե կղզին և սպասեցեք այնտեղ մյուս նավերին»:

Շոգենավը նորից ճանապարհ ընկավ. լուսին չկա

երկինքը, մութ է. օդը հանդարտ, ալիքները ծուփ ի ծուփ գալիս խփվում են հանդարտ առաջացող նավին, քաղաքը հազիվ մի լուսավոր գծի նման երևում է հեռվից, չգիտենք թե ինչ է կատարվում այնտեղ, գիտենք միայն, որ բոլոր ժողովուրդը պիտի գաղթեր, բայց արդյոք վերջին բուստին մի որևէ արկած չեկա՞վ խանգարելու այդ գաղթը և ժողովուրդը սրի ու կրակի գոհ գնաց: Ո՛ր են մերոնք, մեր ընտանիքը, մեր ծնողները, որոնք մինչև վերջին բուստին անխոհեմությամբ մերժել էին հեռանալ տուն ու տեղը թշնամու ձեռքը չթողնելու համար, անխոհեմությամբ վստահելով այն սուտ խոսքի վրա, որ շատերի բերանն էր պտտվում քաղաքում, թե գործը խաղաղ ազգաբնակչության հետ գործ չունի:

Վերջապես կանգնեց շոգենավը ծովի բացում, չգիտենք որտեղ ենք, այդտեղ բաց ծովի վրա կանգնած մնացինք ամբողջ գիշերը, լուսանալու մոտ նավոր նորից շարժվեց դեպի առաջ: Այս անգամ մեր առաջը կտրեց մի ուրիշ զինվորական պահականավ և հարց տվեց, նավապետն սկսեց կրկնել իր չարախոսությունը. «Շոգենավի մեջ գտնվում են զինված հայեր, նավաստիությունը վախենում է և մերժում ավելի առաջ գնալ»:— Գիտենք, գիտենք,— պատասխանեցին պահականավից խստությամբ.— այժմ հետ դարձեք քաղաք, այնտեղ ձեզ կհանձնեն թնդանոթներ, կվերցնեք և կփոխադրեք Էնգելի»:

Մենք մի կողմից ուրախացանք, որ ոչ միայն մեր զենքերը չկվեցին, այլ ընդհակառակը թնդանոթներ էլ ենք ստանալու, բայց մյուս կողմից տխրում էինք մտածելով, որ նորից հետ ենք դառնում այնտեղ, որ դժոխք էր դարձել, ենթարկվելու ով գիտե ինչ անակընկալ պատահարի:

Շոգենավը դարձրեց իր ընթացքը, լուսացել էր, երբ հասանք քաղաք: Կռիվ էր, կատաղի կռիվ, որի նմանը թերևս իր ամբողջ գոյության մեջ չէր տեսել Բաքուն: Հեռուն, քաղաքի ետևը բարձրացող բլուրների վրա որոտում էին տասնյակներով թնդանոթներ, ծուխն ու որոտը բարձրանում էին անընդհատ այս ու այն կողմերից ռումբերն ու շրապնետները թափվում էին շարունակ, հրացանների ճայթյունները և գնդացիր-ների թրխկոցը երկու կողմից իրար միացած, մի անընդհատ շարք էին կազմել և այլևս անկարելի էր գանազանել, թե ո՞րն է թշնամու հարվածը և ո՞րն է մերը: Հակառակ մեր սպասածի, մերոնք կռվում էին դեռ քաջությամբ, գուցե ավելի երկար պաշտպանելու համար նահանջը: Շոգենավում մի սուտ լուր տարածվեց, թե թուրքերը արդեն ջարդվել են և փախչելու վրա են... հուսահատ մարդը սիրում է հավատալ այդպիսի բարի լուրերին և երբ չի գտնում, ինքն է ստեղծում,»:

Շոգենավը հասնելով քարափ՝ փոխանակ թնդանոթի ստացավ երկու գնդացիր իր պարագաներով, որ բեռնավորեցինք նավի ետևում: Կամուրջի վրա թափված էր ժողովրդի մի ահագին բազմություն. նրանցից մի խումբ լցվեց մեր շոգենավը և իսկույն նորից բացվեցինք: Ահա աչից ու ձախից շարժվում են ուրիշ-ուրիշ շոգենավեր, լուռ ու անշշուկ, առանց սուլելու, հնոցները վառած սաստիկ, ծուխն ու շոգին

հորդառատ բարձրանում է ծխնելույզներից և սև ամպերի նման լցնում մթնոլորտը: Արագ-արագ անցնում են նրանք մեր մոտով, իսկ մեր շոգենավն այնքան դանդաղ է գնում՝ որ կարծես կանգնած է: Հանկարծ տաճիկները նկատեցին մեզ. նկատեցին, որ արդեն ժողովուրդը փախչում է. և ռումբերի ու դրապնետների տարափն ուղղվեց դեպի շոգենավերը. մի շրապնետ եկավ, ահարկու ճայթյունով պայթեց ու թափվեց ուղղակի մեր շոգենավի կողքին՝ ծովը: Ահա մի ռումբ ընկավ Բիբի-Շեյբաթի նավթային ավազաններից մեկի վրա և կրակ տվեց նրան. հրդեհը բարձրացավ, ծուխի թանձր ու սև քուլաները, բոցերի կարմիր լեզուների հետ խառնված, մի ահռելի տեսարան կազմեցին: «Ափսո՛ս, Բաքու,— դուրս թռավ բոլորի բերանից,— սուրի ու կրակի ճարակ պիտի դառնաս, մոխիր ու ավերակ պիտի դառնաս»: Շոգենավը արագացրեց իր ընթացքը՝ փախչելու համար տաճիկների հարվածներից ու վերջապես հասավ մյուսների: Ահա ծովի բացումն ենք նորից, նայում են շուրջս մոտ ու հեռու, չորս կողմից շարված են բազմաթիվ մեծ ու փոքր շոգենավեր. հաշվում են. 36 շոգենավ է. մի ահագին նավատորմ է կարծես, որ ծովի երեսը լցրել է; Եվ որքա՛ն բազմություն: Բոլորն էլ լիքն են փախստականներով, մեծ ու փոքր, կին ու երեխա, զինվոր ու քաղաքացի: Բոլորն էլ փախչում են: Գնում ենք այդպես խմբով, իրար հետ միասին, կարծես պար բռնած ծովի վրա, մինչև մեր ետևում վառվում է քաղաքը, որոտում են թնդանոթները, ճարճատում են հրացանները: Քիչ-քիչ ձայները դադարում են, քաղաքն անտես է դառնում ու մեր շոգենավերը սկսում են հեռանալ միմյանցից, ոմանք բռնում են Կրասնովոդսկի ճանապարհը, ոմանք դեպի Պետրովսկ, ոմանք էլ թերևս Աստրախան: Մեր շոգենավը գնում է դեպի Էնգելի. երկու ուրիշ շոգենավ մոտենում են մեզ. մեկը հռչակավոր «Պուշկին»-ն է, ուր գտնվում են մի խումբ դաշնակցական զինվորներ, Բյուրոյի անդամները, Ազգային խորհուրդը և Բաքվի հայ մտավորա-կան ուժերը: նրանք հայտարարում են մեզ շոգենավից, թե իրենք գնալու են Էնգելի, հրամայում են մեր նավապետին նույնպես գնալ ուղղակի Էնգելի և հեռանում են:

(Շարունակություն 2)

**ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
բան. գիտ. դոկտ.

**Ա. ՆԵՐՍՏՈՒԹՅՈՒՆ**

Հայ հին գրականությունը համաշխարհային գրավոր մշակույթի հետաքրքիր եւ ինքնատիպ բնագավառներից է: Նրա ակունքները խոր հնադարում են, այն ժամանակներում, երբ հայկական լեռնաշխարհում տոհմերի եւ ապա ցեղերի միավորման ճանապարհով ձեւավորվել է հայությունը իբրեւ ժողովուրդ ու ազգ: Այդ

գործընթացն ունեցել է մի քանի հազարամյակի տեւողութիւն, եւ գեղարվեստական միտքն իր արտահայտութիւնն է ստացել բացառապէս բանավոր ճանապարհով՝ որպէս նախնական աշխարհայեցողութիւն ու հավատալիք: Վաղնջական այդ պատկերացումները վերաբերում են չար ու բարի ոգիներին, հոգու հավատքին, բնութեան պաշտամունքին եւ տարերային ուժերի աստվածացմանը, օդերեւութիւնն ու երկնային լուսատուներին: Նրանց մեջ երեւան է եկել անհմիզմը, ըստ որի բոլոր առարկաներն ընկալվել են մարդկային էութեամբ ու բնավորութեամբ: Լուսատուների եւ օդերեւութային շարժումների պատճառ համարվել են դեմոններն ու աստվածները: Նախնի հայերի պաշտամունքի դրսեւորումներից մեկն էլ եղել է տոտեմիզմը՝ սրբազան համարված որեւէ կենդանու, բույսի կամ բնութեան երեւութի աստվածացումը: Աստվածացնելով պաշտողները նրանց դիտել են որպէս իրենց նախնիներ եւ իրենց էլ կոչել նրանց անունով:

Հայկական հնագույն հավատալիքներն ու պաշտամունքը, իբրեւ աշխարհայեցողութիւն ու կյանքի գեղարվեստական պարզ ընկալում, խոր հետքեր թողնելով բարքերի ու կենցաղի մեջ, շարունակել են հարատեւել ու պահպանվել ոչ միայն քրիստոնեական միջնադարում, այլեւ հասել են մինչեւ նոր ժամանակներ՝ անշուշտ շատ բան կորցրած իրենց նախնական ամբողջականութիւնից ու անաղարտութիւնից, լեզվով նորոգված, կերպարանափոխված ու խավավորված ըստ քրիստոնեական աշխարհայեցողութեան, միախառնված պատմակենցաղային բնութի այլեւայլ դրվագների: Մինչեւ հինգերորդ դար կենցաղավարելով որպէս ավանդական բանահյուսութիւն՝ այնուհետեւ նրանք ամբողջ միջնադարում այս կամ այն չափով տեղ են գտել հայ մատենագրութեան մեջ՝ սովորաբար ժխտման ու մերժման վերաբերմունքով, իսկ հատկապէս ԺԹ-Ի դարերում ժողովրդական գրուցաբանների ու բանասացների բերանից գրառվել են ու հավաքվել բանահյուսական և ազգագրական ժողովածուներում: Այդպիսով, բանահյուսական վաղեմի նմուշները, նրանցում արտահայտված հավատալիքներն ու պաշտամունքը միջնադարում եւ նոր ժամանակներում իրենց գոյութիւնը պահպանել են որպէս վերապրուկներ: Անհիշելի ժամանակներից հարատեւող հավատալիքների ու պատկերացումների մասին են վկայում հնայական աղբյուրները (այսպէս կոչված «կապքի աղբյուրները», որոնք հետագայում եւս կենցաղավարել են բերանացի ճանապարհով, գրավոր «հմայքները», «հմայելները» կամ «հմայիլները»), հնայական բանաձեւերն ու երդմնեցումները, նաեւ սնահավատական գրույցները: Դրանք միաժամանակ հայ ժողովրդի գեղարվեստական մտածողութեան ամենահին դրսեւորումներն են:

Հավատալիքների ու աշխարհի մասին նախնական պատկերացումների համեմատութեամբ ավելի հասուն աշխարհընկալման արդյունք են հայ ժողովրդական առասպելները, որոնց պահպանման համար պարտական ենք, մանավանդ, պատմահայր Մովսէս Խորենացուն: Հայկական առասպելաբանութեան առկա ամենահին գրավոր աղբյուրը Խորենացու «Հայոց պատմութիւնն» է, հատկապէս նրա առաջին գիրքը: Խորենացին նշում է այն սկզբնաղբյուրները, համաձայն որոնց ներկայացրել է առասպելներն ու դիցաբանական գրույցները. դրանցից մեկը ասորի Մար Աբաս Կատինայի անունով (կամ թերեւս նրան վերագրված) մի մատյան է եղել, իսկ մյուսը՝ հայ

ժողովրդական գուսանական երգերը, հայոց նախնիների, նահապետների ու դյուցազունների մասին հերոսական պատումները, որ կատարել են գուսանները փանդիոն նվագակցութեամբ:

(Շարունակութիւն 1)

# Չախապանի

## Լուծ

Վրդեն ամառ է, եղանակը տաքացել է, այս եղանակին ամենատարածված աղետամոքսային տրակտի հիվանդութիւններից լուծն է: :Լուծը առաջանում է վատ որակի կամ անհարմար սնունդ ընդունելուց, օրինակ ծիրան, մսի պահածոներ, սալոր, երշիկ, նրբերշիկ և այլն: Լուծը երկու տեսակ է՝ հասարակ և բակտերիալ, հասարակ լուծի ժամանակ միայն կղանքի հաճախականութիւնն է կա, սակայն բակտերիալ լուծի ժամանակ բացի կղանքի հաճախականութիւնից կարող է լինել ջերմութեան բարձրացում:

Հաճախ լուծը զուգորդվում է աղետամոքսային այլ նշաններով, օրինակ՝ սրտխառնոցով, փորացավով, փսխումով (հետտալ):

Լուծի հիմնական վտանգը մարմնի ջրազրկումն է, որը վտանգավոր է նորածինների և տարիքավորների համար:

Լուծի բուժման համար պետք է կիրառել հետևյալ քայլերը՝ 1-Հնարավորին չափով հեղուկ խմել, եթե բերանով չի կարողանում ընդունել և փսխում է երակային սիստեմով՝ սերոմ պետք է հեղուկ տալ, 2- Օգտագործել հակալուծային դեղորայք, մեզ մոտ այդ դեղորայքներից կարելի է նշել հետևյալ դեղահաբերն՝ Diphenoxylate, lodoquinol, Loperamid, իսկ փորացավի համար կարելի է օգտագործել Hyoscin, Dicyclomine, Belladonna դեղահաբերն ու սրտխառնոցի կամ փսխումի համար Metocloperamide, Dimenhydrinate դեղահաբերը: Բարդ լուծերի կամ միկրոբային լուծերի ժամանակ ավելի կոնսպիքսային բուժման անհրաժեշտութիւնն կլինի և պետք է բժշկի հսկողութեան տակ պարզել հիմնական պատճառը և ճշտել որոշակի բուժում:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ ՓՈՔՐԻԿ ԽՈՒՐՁ

Հայր ու որդի գնում են ճաշարան, մատուցում են դոմա.  
\_Հայրիկ, ընչի՞ դոմեն ջուխտ-ջուխտ կուտես.  
\_Ա՛յ տղա, հըբը իրեք – իրեք ուտեն, օր խեղդվի՞մ:

Ծո, ո՞ւր է մերդ.  
\_Պա՛, կես ժամ առաջ հինգ րոպեով գնաց պապոնց տուն:

Բոստանչի Օնեսը ծեծում է իր կնոջը: Հարևանը օգնութեան է հասնում.  
\_Ա՛յ մարդ, ի՞նչ կենես, ի՞նչ պատճառ կա, ընչի՞ կծեծես էդ խեղճ կնկան.  
\_Ըշտը օր պատճառ էղներ, կսպանեի, - պատասխանում է Օնեսը:

Դասախոսը դիտողութիւն է անում ուսանողներին.  
\_Չէ՞ք կարող մի րոպե լուռ մնալ.  
\_Մե րոպե կըրնանք, հըմը 45 րոպե չենք կըրնա, - պատասխանում է ուսանողը: